ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(19/10-Լ) ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 14.05.2019 թվականի թիվ 294/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 29.05.2019 թ. ժամը 11:30-ին, ՀՀ պետական եկամուտների վարչական շենքում, ք. Երևան, Մ. Խորենացու 3,7:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ղարիբջանյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Հ. Վանյանը, Ջ. Բաբայանը, Մ. Կարապետյանը, Լ. Դեմիրչյանը, քարտուղար Լ. Հարությունյանը, «Արմեն Զաքարյան Գագիկի» Ա/Ձ-ի ներկայացուցիչ Արմեն Զաքարյանը:

Գների նվազեցման նպատակով բանակցությունների անցկացման մասին

ՀՀ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(19/10-Լ) ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա. Ղարիբջանյանը տեղեկացրեց, որ հանձնաժողովը ՀՀ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(19/10-Լ) ծածկագրով գնման հրավերի 7.7 կետի համաձայն գնանշման հարցման ընթացակարգի համար գների նվազեցման նպատակով բանակցություններին մասնակցելու համար գնային առաջարկ ներկայացրած և հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին 23.05.2019թ. Armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով հրավիրել էր 29.05.2019 թ. 11:30-ին մասնակցելու բանակցություններին:

29.05.2019 թ. 11:30-ի դրությամբ բանակցություններին մասնակցում էր «Արմեն Զաքարյան Գագիկի» Ա/Ձ-ի ներկայացուցիչ Արմեն Զաքարյանը:

Գնահատող հանձնաժողովը բանակցությունների համար մասնակցին տրամադրեց 20 րոպե: Մասնակիցը իր ներկայացրած գինը իջեցրեց 500 000 դրամի՝ նախահաշվով սահմանված գնին հավասար:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «Արմեն Զաքարյան Գագիկի» Ա/Ձ-ին ճանաչել ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակից:
2. Ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հայտով առաջարկվող ապրանքի /ապրանքների/ ամբողջական նկարագիրը:
3. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների տվյալները՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ տեղեկատվության ստացման նպատակով:
4. Գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ Ա. Ղարիբջանյան

անդամներ՝ _____ Հ. Վանյան

_____ Ջ. Բաբայան

_____ Լ. Դեմիրչյան

_____ Մ. Կարապետյան

քարտուղար՝ _____ Լ. Հարությունյան